“Freakonomics”-ի ամփոփում: Տարօրինակագիտություն
Թեմաներն ու սկզբունքային գաղափարները:

Թեեւ հեղինակները նշում են, որ գիրքը որեւէ կոնկրետ թեմայի շուրջ չի ծավալվել, մենք անդրադարձել ենք մի քանի գաղափարների, որոնք հաճախակի են հանդիպում ողջ գրքում:

Բացարձակն ընդդեմ նորմատիվ վերլուծության

Գրքի պատմություններից մեծ մասը մարտահրավեր է նետում ընթերցողի մինչ այդ եղած համոզմունքներին, այսինքն՝ սովորական իմաստություններին: Գրքի յուրաքանչյուր գլխում շարադրված զանազան հետազոտությունների եզրակացությունները ձեզ հաճախ կզարմացնեն: Դրանք նույնիսկ կարող են գրգռել ձեր զգայությունները:

Այդ գլուխներում շարադրված հետազոտությունները գուցե նման չեն այլ քանակական կողմնորոշում ունեցող գրքերի, եւ կարող են համոզիչ ձեւով ներկայացնել բարոյական մարդու եւ գիտնականի աշխարհայացքների տարբերութիները:

Եթե բարոյագիտությունը ներկայացնում է այն ճանապարհը, որով մարդիկ կցանկանային տեսնել աշխարհը աշխատանքի պրոցեսում (գործընթացում), ապա տնտեսագիտությունը ներկայացնում է, թե իրականում ինչպես է այն աշխատում:

Ինչպես նշում են հեղինակները. “Շատ լավ է կարծիք կազմել եւ տեսութիվներ մշակել ինչ-որ բանի մասին, քանի որ մարդկությունն է դա ուզում, բայց երբ ձեւական բարոյականությունը փոխարինվում է փաստերի անկեղծ գնահատականով, արդյունքը հաճախ նոր եւ զարմանալի հասկացություն է լինում”:

Գիտական հետազոտության էությունը

Տարօրինակագիտությունը գիտական գործընթացում նոր հասկացություններ է ներմուծում: Տարօրինակագիտության հետազոտությունները ուղղված են տնտեսական եւ սոցիալական խնդիրներին, որոնց քանակական վերլուծությունը սովորաբար շատ դժվար է թվում, բայց ոչ անհնար:

Փորձարկվող վարկածների ձեւակերպման միջոցները, օգտակար տվյալներ հավաքելու հետ կապված դժվարություններն ու այդ տվյալների օգտագործումը իրական գիտական հետազոտության, կարգապահության եւ ստեղծագործ, մտավոր գործունեության արդյունք են:

S++ը կոնկրետ ներկայացնում է (պատկերացում է տալիս), որ տվյալներ հավաքելու ոչ ավանդական մեթոդներն ու դրանք ուսումնասիրելու գլխիվայր շուռ տված եղանակներն անհրաժեշտ են աշխարհը հասկանալու համար:

Գիտենալով, թե "ինչ" եւ "ինչպես" պետք է չափել, աշխարհն առավել քիչ խճճված կդարձնի:

Դրդապատճառը ժամանակակից կյանքի հիմնաքարն է:

Իսկապես, դրդապատճառները մարդկության գոյատեւման հիմնաքարերն են: Տնտեսագիտությունը մարդկության վարքագծի ուսումնասիրումն է, ինչպես դա երեւում է դրդապատճառների մշուշում: Դրդապատճառների ընկալումը ցանկացած մարդկային վարքագիծի հստակ ըմբռնման բանալին է:

Ընդունված ըմբռնումները հաճախ սխալ են

Տարօրինակագիտությունը հաճույք է ստանում տնտեսական հետազոտությունների զորեղ քանակական գործիքներն օգտագործելով ընդունված ըմբռնումները գլխիվայր շուռ տալուց:

Հեղինակները չեն պնդում, որ ընդունված ըմբռնումները միշտ են սխալ, բայց նրանք իսկապես եզրակացնում են, որ բազմաթիվ սոցիալական խնդիրներ բացատրելու համար օգտագործվող ավանդական իմաստությունը վատ է ուսումնասիրված, անառարկելի է եւ հաճախ էլ սխալ:
Աննկատ, հեռավոր պատճառները կարող են ունենալ ահռելի հետեւանքներ:

Ինչպես հաղորդում են հեղինակները. "տրված հանելուկի պատասխանը միշտ չէ, որ ձեր առջեւում է": Ի հարկե, դրական տնտեսական հետազոտությունը եւ անհարմար սոցիալական հանելուկները լուծելու համար անհրաժեշտ տվյալների հայտնաբերումն ու բացատրումը հաճախ բարդ են: Սակայն հենց այդ բարդ կողմն է, որ նրան ուշադրության արժանի է դարձնում: Եթե հեշտ լիներ, ցանկացած մարդ կ՛աներ: